Երեւանի հ. 181 հիմն.
դպրոց

«Փոքրիկ երգիչներ»
խմբակի ծրագիր

Երևանի հ.181 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի «Փոքրիկ երգիչներ» խմբակի տարեկան ծրագիր

1. Ծրագրի նպատակը և խնդիրները

- Ծանոթացնել խմբերգային երգեցողությանը
- Երգեցողության կանոններին
- Ձևավորել և զարգացնել խմբովի միաձայն, երկձայն և եռաձայն երգեցողության կարողություններն ու հմտությունները
- Զարգացնել մաքուր հնչերանգով, հստակ ռիթմով, ճիշտ շնչառությամբ նառոգանությամբ երգելու կարողությունը
- Պահպանել և զարգացնել մանկական երգչային ձայնը
- Երեխայի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային երաժշտությունը, չբացառելով նաև այլ ժողովուրդների և դասական կոմպոզիտորների ստեղծագործությունները
- Երեխաների մեջ արթնացնել սեր երաժշտության նկատմամբ

2. Ակնկալվող վերջնարդյունքները

- Կերգի /մենակ և խմբով/ մանկական, ժողովրդական, դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր և կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին
- Կարժևորի հայ ազգային և դասական կոմպոզիտորների երաժշտությունը, կդառնա նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը

3. Հատկացվող ընդհանուր ժամաքանակը

- Շաբաթական՝ 2 ժամ
- Տարեկան՝ 68 ժամ

4. Բովանդակությունը (բաշխել թեմաներն ըստ ժամերի)

Թեմա	Ժամ.	№	Դաս	Նպատակ
Հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ (13 ժամ)	2	1	«Սիրելի ուսուցիչ» խոսք և երաժշտ. Հռ. Խրիմյանի	Դաստիարակել սեր դեպի հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները։
	2	2	«Գովք դպրոցին» խոսք՝ Գ. Կարապետյանի, երաժշտ. Խ. Մարտիրոսյանի	Զարգացնել երաժշտությունն ունկնդրելու և վերլուծելու կարողությունը։
	2	3	«Հայաստանի օրհներգը» խոսք՝ Միք. Նալբանդյանի, եր.՝ Բ. Կանաչյանի	Զարգացնել երգը մաքուր հնչերանգով, արտահայտիչ կատարելու հմտությունները։
	6	4	«Հայաստան» խոսք Վ. Վարդունու, երաժշտություն Ռ. Պետրոսյանի	Ծանոթացնել երգերի կառուցվածքին, բացատրել բառերի նշանակությունը։
	1	5	Երգերի կրկնողություն	Զարգացնել երաժշտական ստեղծագործություններն ուշադիր լսելու և ինքնուրույն մեկնաբանելու կարողությունները։
Ժողովրդական ազգային երգեր (9 ժամ)	2	6	«Բասեն բարի» մշակումը Կոմիտասի	Դաստիարակել սեր Կոմիտասի երաժշտության հանդեպ։ Արժևորել Կոմիտասի ժողովրդական երգերի մշակումները։ Ձևավորել ստեղծագործությունները երգելու, ունկնդրելու, տարբերելու և վերլուծելու կարողություններ և հմտություններ։ Զարգացնել մեներգելու և խմբով երգելու
	2	7	«Զար զընգը» հայկական ժող. երգ	
	2	8	«Թեշիկի երգ» մշակումը Կոմիտասի	
	2	9	«Ախ ինչ լավ է»	

	1	10	խոսք և երաժշտ. Հ. Թումանյանի Երգերի կրկնողություն	կարողություններն ու հմտությունները: Զևավորել երաժշտության բնույթի, վերլուծության հմտություններ:
Մանկական երգեր (7ժամ)	2	11	«Փաթիլներ» երաժշտ. Հռ. Խրիմյանի, ունկնդրում՝ Պ. Չայկովսկի «Փաթիլների պարը»	Դաստիարակել սեր և հետաքրքրություն մանկական երգերի հանդեպ: Ծանոթացնել հայ և այլ ազգերի կոմպոզիտորների կյանքին և ստեղծագործություններին: Բացատրել երգերի կառուցվածքը, հնչերանգը:
	2	12	«Դինգ- դոնգ» երաժշտ. Ռ. Ամիրխանյանի	
	2	13	«Զանգակներ» անգլ. մանկ. երգ, ունկնդրում՝ տարբեր լեզուներով	Զարգացնել երաժշտության բնույթը, բովանդակությունը, արտահայտչական միջոցները զգալու և ինքնուրույն մեկնաբանելու կարողությունները: Սովորեցնել երգին բնորոշ պարային շարժումներ, ծափեր:
	1	14	Դաս- համերգ	

Ծիսական երգեր (5 ժամ)	2	15	«Ազգային օրհներգ» քրիստոնեական երգ	Ծանոթացնել ազգային ավանդական ծեսերի հետ, այդ տոներին կատարվող երգերին և սովորույթներին։ Զարգացնել երգչային ձայնը, լադային լսողությունը, սեր և հետաքրքրություն առաջացնել ծիսական երգերի հանդեպ։
	2	16	«Հայր մեր» եր. Մ. Եկմալյանի	
	1	17	«Տերընդեզ» հայկ. ժող. երգ	
Հայրենասիրական երգեր (10 ժամ)	2	18	«Խաղաղություն» երաժշտ. Հռ. Խրիմյանի	Ձևավորել պատկերացումներ հայրենասիրական երգերի մասին, արժևորել այս երգերի ճանաչողությունը մեր կյանքում։ Սովորեցնել ճիշտ կատարել հայրենասիրական երգերը։ Պահպանել երգերի խրոխտ բնույթն ու տրամադրությունը։ Դաստիարակել հայրենասիրություն, սեր դեպի հայրենիքը։
	4	19	«Խաղաղ երկինք»խոսք՝ Ն. Միքայելյանի, եր. Խ. Մարտիրոսյան ի	
	4	20	«Մարտիկի երգը» խոսք՝ Ա. Գրաշու, եր. Ա. Սաթյանի	Զարգացնել մաքուր հնչերանգով, հստակ ռիթմով, ճիշտ շնչառությամբ և առոգանությամբ երգելու կարողությունը։

Հանրամատչելի երգեր (7ժամ)	2 2 2 1	21 22 23 24	«Գարուն, գարուն, գարուն» եր. Ա. Շահզադեյանի «Մայրիկ» խոսք՝ Մ. Մարկոսյանի, եր. Էդգ. Ալեքսանյանի «Զատիկ» հայկ. ժող. երգ Երգերի կրկնողություն	Ընդլայնել սովորողների երաժշտական և ընդհանուր մտահորիզոնը՝ շարունակել դաստիարակել երաժշտական ճաշակ, զարգացնել կայուն հետաքրքրություն այլ ժողովուրդների, ժամանակակից երաժշտության ժառանգության հանդեպ, արժևորել մշակութային բազմազանությունը:
Երկձայն երգեցողություն (15 ժամ)	4 5 5 1	25 26 27 28	«Գարնան սպասում» եր. Ա. . Լուսինյանի «Անդաստան» մշակումը Ա. Շահնազարյանի «Նոր Հայաստան» խոսք և եր. Ստ. Լուսիկյանի Ամփոփում, դաս-համերգ	Զարգացնել սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով երկձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը: Ծանոթացնել նաև ձեռքի նշաններով երգեցողությանը, որը նախապատրաստում է միաձայնությունից անցումը բազմաձայն երգեցողությանը:

Օգտագործված գրականության ցանկ՝

1. Ռ. Պետրոսյան «Մանկական խմբերգեր» գիրք առաջին, Երևան- 2008

2. Է. Էլբակյան «Երգում է Հայաստանի երգչախմբային ընկերության մանկական ստուդիան», Երևան-2007

3. Դ. Ղազարյան «Կոմիտաս- Մանկական խմբերգեր», Երևան- 2014

4. «Հայ կոմպոզիտորների մանկական խմբերգերի ժողովածու», Երևան- 2011

5. Հռ. Խրիմյան « Մանկական երգեր» ժողովածու, Երևան-2007

6. Լեյլա Կարապետյան «Երգարան», Երևան- «Շաղիկ»- 1995